ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Սեդա Գրիգորյանը, Լյուդվիկ Եղիազարյանը, Ռոբերտ Հովսեփյանը, Արմինե Մեսրոպյանը, Աշոտ Սահակյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Շողիկ Պողոսյան, Բարսեղ Նիկողոսյան, Հերմինե Ղազարյան, Աննա Հակոբյան, Նորիկ Նահապետյան, Նելլի Պետրոսյան, Լալա Վաղարշակյան, Ելենա Քարամյան, Լևոն Նավասարդյան, Ալիսա Պարսամյան, Անի Սարգսյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Առաքելյանը**

Լսեցին

***ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով.

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 10 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ա/

Լսեցին
***ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի բնակիչ՝ Ուսուբ Զարքազի Կոտեյանի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումը.

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի վարչական տարածքում գտնվող Ուսուբ Զարքազի Կոտեյանի սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 04-053-0022-0009 կադաստրային ծածկագրի 0,4 հա վարելահողը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հող կատեգորիայի /ջերմոց/:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

Լսեցին
***ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 17-ի N 2/փ 198 եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի բնակիչ՝ Նարինե Սուրենի Աբրահամյանի 2023 թվականի մարտի 15-ի դիմումը.

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի վարչական տարածքում գտնվող Նարինե Սուրենի Աբրահամյանի սեփականությունը հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության 04-037-0154-0004 կադաստրային ծածկագրի 0,06 հա արոտավայրի հողամասը փոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր կատեգորիայի /բնակելի տուն/:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ա/

Լսեցին
***ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Հ այաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի բնակիչ՝ Գագիկ Կառլենի Բաբայանի 2023 թվականի սեպտեմբերի 27-ի դիմումը.

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղի վարչական տարածքում գտնվող Գագիկ Կառլենի Բաբայանի սեփականությունը հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության 04-052-0018-0024 կադաստրային ծածկագրի 0,1704 հա այլ հողատեսքի հողամասը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ գյուղարտադրական օբյեկտների հողերի կատեգորիայի /չրանոց, գյուղատնտեսության մթերքի պահեստ/:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114-Ա/

Լսեցին
***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, <<Հրապարակային սակարկությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն օտարել աճուրդային կարգով՝ համաձայն հավելվածի:
2.Մասնակցության վճարը՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ: Նախավճարը՝ մեկնարկային գնի 50 %-ի չափով: Սահմանափակումներ չկան:
3.Հողատարածքի յուրաքանչյուր լոտի համար յուրաքանչյուր քայլը սահմանել մեկնարկային գնի նվազագույնը 5 %-ի չափով:
4. Համայնքի ղեկավարին /Արգիշտի Մեխակյան/ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները՝ օրենքով սահմանված կարգով:
Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115-Ա/

Լսեցին
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՅԳԵՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 28-րդ կետերով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 515-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Խոյ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյհամայնքի «Այգեշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյհամայնքի «Այգեշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3.Ապահովել օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյհամայնքի «Այգեշատի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 116-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՅԳԵՇԱՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, հիմք ընդունելով Խոյհամայնքի ղեկավարի առաջարկությունը.

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյհամայնքի «Այգեշատիմանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2023 թվականի աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117-Ա/

Լսեցին

***ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 - ի N-173 Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, Նորմատիվ Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի <<Համայնքի 2023 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 173-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118-Ն/

Լսեցին
***ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի երրորդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետութան օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով , հիմք ընդունելով բնակիչներից ստացված դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Սահմանել անշարժ գույքի հարկի տույժերի գծով արտոնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԽՈՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով Խոյ համայնքի ավագանին

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Հաստատել՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԽՈՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՈԱԿ)-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԽՈՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՈԱԿ)-ին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել՝

ա) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀՈԱԿ-Ի Լ.Նավասարդյան փողոց 19/1 հասցեում գտնվող Շահումյանի վարչական շենքի 1-ին հարկում զբաղեցրած 121.2 քմ մակերեսով տարածքը:

բ) ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 20-րդ փողոց 2 հասցեում գտնվող 104.9քմ. մակերեսով շենքը և շենքի զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը:

գ) ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԱՂԱՎՆԱՏԱՆ>> ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Նշան Մաթևոսյան պողոտա թիվ 27 հասցեում գտնվող 490.7քմ մակերեսով շենքը և շենքի զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը:

դ) <<ՀԱՅԹԱՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Բաղրամյան փողոց 5 հասցեում գտնվող 181.6 քմ մակերեսով շենքը և շենքի զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը:

ե) << ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 19 փողոց 21 հասցեում գտնվող 203.8 քմ մակերեսով շենքը և շենքի զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը:

զ) <<ԳԵՂԱԿԵՐՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Մ. Մաշտոց փողոց 36 շենք հասցեում գտնվող Մշակույթի տան շենքի 1-ին հարկում զբաղեցրած 149.4քմ մակերեսով տարածքը:

3.Հանձնարարել Խոյի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնին կատարելու համապատասխան ֆինանսական գործողություններ կապված ՀՈԱԿ-ի պետական գրանցման, կնիքի ձեռք բերման և այլ ծախսերի հետ:

Կողմ-14 Դեմ-2 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ և 42-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4.1-րդ կետերով սահմանված դրույթները և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ուղղված սուբվենցիա ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սուբվենցիայի ծրագրային հայտը համաձայն հավելվածի :

2. Սահմանված ժամկետում սույն որոշմամբ հաստատված սուբվենցիայի ծրագրային հայտը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնելու համար:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾ ԳՅՈՒՂԻ 20-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության

2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արագած գյուղի 20-րդ փողոցը անվանափոխել և անվանակոչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գյուղ Արագած, Սուրբ Ստեփանոսի փողոց:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ա/

Լսեցին
***ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով <<Շահումյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ.Խաչատրյանին 2023 թվականի օգոստոսի 21-ի թիվ 51 գրությունը, ինչպես նաև Արմավիրի մարզի «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերության գործադիր տնօրեն Ն.Պետրոսյանի 2023 թվականի հուլիսի 31-ի թիվ 01-01/569-23 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի <<Շահումյանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 974500 /ինը հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր / ՀՀ դրամ դրամաշնորհ՝ ամենավատթար վիճակում գտնվող դասասենյակը վերանորոգելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Էջմիածին» ջրօգտագործողների ընկերությանը հատկացնել 500 000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ կապիտալ դրամաշնորհ՝ փակ խողովակաշարի կառուցման աշխատանքները կատարելու համար:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ի ԹԻՎ 05-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 2-ՐԴ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 28-րդ կետով, <<**Համայնքային կառավարչական հիմնարկների մասին>>** Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ հոդվածներով և 11-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին կետով և և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրությունը, համաձայն հավելվածի:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Խոյ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 4-ի <<**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ <<ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>** թիվ 05-Ա որոշմամբ հաստատված 2-րդ կետը;

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ա/

Ավագանու անդամներ

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ԷԴԳԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

ՍՈՖԻԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐԱՅԻԿ ՊԱՐՍԱՄՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼԻԶԱ ՌԱՊՅԱՆ

ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ_____

*Նիստն արձանագրեց՝* ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԸ _____